ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն տնտեսագետ, քաղաքական գործիչ, աշխարհագրագետ պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գրիգոր Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոցի հ. 40 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրիգոր Ավագյանը ծնվել է 1927 թ. սեպտեմբերի 23-ին Գրոզնի քաղաքում:

1947-1952 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետում:

1990 թ.ընտրվել ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1992 թվականին ակադեմիկոս:

Գրիգոր Ավագյանի հիմնական աշխատությունները վերաբերում են տնտեսական աշխարհագրությանը, աշխարհագրության տեսությանը, քարտեզագրությանը, Հայաստանի լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին, Հայաստանի գյուղատնսեսության զարգացման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիներին:

Համալսարանն ավարտելուց հետո անցել է մանկավարժական աշխատանքի:

1952-1957 թթ. աշխատել է Երևանի Թելմանի անվան, իսկ 1957-1958 թթ. Թումանյանի անվան դպրոցներում:

1958-1961թթ. աշխատել է անցել Դպրոցների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող:

1962–1974 թթ. եղել Երևանի Պետական Համալսարանի դոցենտ , 1976–2000թթ.՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ, 1976–1990 թթ. լեռնային շրջանների հետազոտության լաբորատորիայի վարիչ, 1962—1972 թթ.՝ Գրիգոր Ավագյանը Երևանի պետական համալսարանի դոցենտ, իսկ 1972—1976 թթ. պրոֆեսոր:

1992 թ. Գրիգոր Ավագյանը հիմնադրել է «Պարմանի» ուսանողական համազգային բարեգործական հիմնադրամը, եղել է կազմակերպության նախագահ (1992-2005): Հիմնադրամն օգնել է հանրապետության պետական ԲՈՒՀ-երի մեծ թվով ուսանողների՝ վճարելու ուսման վարձը: Գրիգոր Ավագյանի նախաձեռնությամբ հիմնադրամը հինգ անգամ՝ 1996, 1997, 1998, 1999, 2000 թթ. հրավիրել է Երևանում հայազգի ուսանողության վեհաժողովներ, որոնք Սփյուռքի ուսանողությանը հայրենիքի շուրջ համախմբելու միտում են ունեցել:

Գրիգոր Ավագյանը 40 գիտական և գիտամատչելի մենագրությունների, բազմաթիվ բուհական և դպրոցական դասագրքերի և մեթոդական ձեռնարկների հեղինակ է:

Ավագյանը պարգևատրվել է Խ. Աբովյանի անվան մեդալով:

Մահացել է 2005 թվականի դեկտեմբերի 4-ին:

Տնտեսագետ, քաղաքական գործիչ, աշխարհագրագետ պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գրիգոր Ավագյանի

հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոցի հ. 40 հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Մարտին Գալստյանի կողմից:

Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ